Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

8053

3КП2(47.925)
Σ-24

24 SEP 200

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ, ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՑ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Կ. (բ) Կ. ԼԵՆՔԱՂԿՈՄԻ

14 NOV 2009

# ԿՈՒՍ. ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ԱՍՏԻՃԱՆԻ ՎՐԱ

1. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ-ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ
2. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԲՋԻՋՆԵՐԻ ԿՈՒՍՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
3. ԽՈՐՀ. ՏՆՏ. Մ. Տ. Կ. ԿՈԼԽՈԶ ԵՎ ԴՊՐՈՑԲՋԻՋՆԵՐԻ ԿՈՒՍՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ЗКП2(47-925)
2-24

ԼԵՆԻՆԱԿԱՆ

1932 թ.

«ԼԵՆԿՈՄՏՐԵՍՏԻ» ՏՊԱՐԱՆ

ЭКП2(47·925)
Հ-24
ար.

# ԼԵՆ-ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՅԵՎ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ՅԵՎ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

*(Հ. Կ.(բ) Կ. Լենինականի քաղկոմի յեվ Բ. Վ. Հ. միացյալ պլենումի 1932 թ. Մաիսի 31ի վորոշումը)*

*Հ. Կ. (բ) Կ. Լենինականի քաղկոմի և ԲՎՀ-ի միացյալ պլենումը լսելով ընկ. ՅԵ. ԲՈԳԴԱՆՅԱՆԻ զեկուցումը կազմակերպչական-կուսակցական և մասսայական աշխատանքների վիճակի և կազմակերպության հերթական անելիքների մասին արձանագրում է՝*

*1. Կուս. 16-րդ համագումարի, Կենտկոմի 1931 թ. մարտի 21-ի վորոշումը և նամանավանդ Կենտկոմի 31 թ. հոկտեմբերի 31-ի վորոշումները Անդրկովկասի կուս. կազմակերպությունների աշխատանքների մասին, հրամայողական պահանջ դրին կուս. կազմակերպությունների առաջ յերեսով դառնալու դեպի արտադրությունը, կուսակցական-մասսայական աշխատանքների ծանրությունը արտադրական ստորին ողակները տեղափոխելու և (ցեխ, բրիգադ) ավելի ընդհուպ մոտենալու արտադրական պրոցեսին ու կուսակցական ղեկավարությունն ոպերատիվ և կոնկրետ դարձնելու։*

1008
34388

*2. «Պրավդա» թերթի խմբագրության կողմից կազմակերպված ստորին ողակների մրցականչը, «Բոլշևիկ» ժուռնալի № 5-6 առաջնորդողը, Բաքվի և Թիֆլիսի կուս կազմակերպությունների փորձը հնարավորություն տվին մեր կազմակերպության առանց ուշանալու կազմակերպելու կազմակերպչական և կուս մասսայական աշխատանքների ստուգատես, ինչպես արտադրության, նույնպես և գյուղատնտեսության մեջ, կուս կազմակերպությունն արտադրական ստորին ողակների վրա կոնկրետ ղեկավարությունն ապահովելու, կուսակցական ուժերի ճիշտ դասավորում կատարելու, կոմունիստներին արտադրության մեջ առաջատար դերն ապահո-*

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ—ССРА
им. А. Мясникяна

8053

SEP 2013

վելու և այն, վորի հետևանքով կազմակերպության ուշադրությունը բևեռվեց ստորին կուս. ողակների ամրացման վրա, խոշոր չափով լայնացավ կուս. ստորին ողակների ցանցը, ըստ վորում կազմակերպությունը 1931 թ. 121 ցեխ բջիջների, 22 ողակային բջիջներ 184 կուս խմբակների 184, կազմակերպիչներ փոխարեն 1932 թ. հասավ 175 ցեխ բջիջների, 21 ողակային, 354 խմբակների և 522 կազմակերպիչների:

3. Կուսակցական ընկերների արտադրության մեջ ունեցած առաջատար դերի մասին կարելի յե դատել նրանից, վոր 1931 թ. հարվածայիններ համարվում եյին 8 տոկ. այժմ հաշվում են 62 տոկոս:

4. Կուսակցական ուժերի նման դասավորման և արտադրության մեջ նրանց առաջավոր դերն ապահովելու միջոցով եվ ավելի բարձրացավ կուսակցական կազմակերպության հեղինակությունն անկուսակցական բանվորության և աշխատավորության մեջ, վորի հետևանքով արտադրության առաջավոր բանվորներից անցան կուսակցության շարքերը 1931 թ. 1400 հոգի, 1932 թ. 5 ամսվա ընթացքում 465 հոգի:

5. Կուս. կազմակերպության դերն արտադրության մեջ ավելի բարձրացնելու, նրա շարքերն ավելի մարտունակ դարձնելու և աշխատանքի մեջ նոր բովանդակություն ստեղծելու, նրա քաղաքական զգոնությունը կուսակցական գծից շեղված թեքումների, առանձնապես դեպի աջ թեքումը, վորպես գլխավոր վտանգի, ավելի սրելու մասսաների ստեղծագործական խանդավառությունը մոբիլիզացիայի յենթարկելու արդֆինպլանների կատարման և ընկ. ՍՏԱԼԻՆԻ պատմական ցուցմունքները կենսագործելու նկատառումով, պլենումը հավանություն է տալիս քաղկոմի բյուրոյի կողմից ձեռք առնված բոլոր միջոցառումներին:

6. Պլենումը գտնում է, կուսակցական կազմակերպության առանձին ողակներում կան այնպիսի ընկերներ վորոնք դեռևս չեն հասկացել ու ըմբռնել կուսակցության քաղաքականության և կուսակցության կազմակերպչական աշխատանքների անքակտելի կապն ու այդ յերկուսի միասնության անհրաժեշտությունը, կուսակցական կազմակերպչական, մասսայական աշխատանքների հարատև փոփոխումն համապատասխան ավյալ շրջանի քաղաքական խնդիրների և կազմակերպչական կուսակցական ու մասսայական աշխատանքների այն հզոր ուժը, վորի շնորհիվ կուսակցությունը ձեռք է բերել միջազգային պատմական նշանակություն ունեցող նվաճումներ:

Այս տեսակետից առանձնապես պլենումը սրում է վորջ կազմակերպության ուշադրությունը դեպի կուսակցական կազմակերպչական—մասսայական աշխատանքների թերագնահատումը, վորպես ոպորտունիզմի բնորոշիչ և վորջ կազմակերպության առաջ խնդիր է դնում ավելի ծավալել կուսակցական կազմակերպչական-մասսայական աշխատանքների պրոպագանդան, վորպես բոլշևիկյան միակ և ճիշտ միջոց կուսակցության կողմից առաջադրված քաղաքական նպատակներ իրագործելու համար:

7. Պլենումը գտնում է, վոր կուսակցական կազմակերպչական մասսայական, դաստիարակչական աշխատանքներին ոպորտունիստորեն թերագնահատելու հետևանքով դեռևս բոլոր բջիջները չեն կարողացել կուսակցության կենտկոմի և քաղկոմի վորոշումներն այդ մասին կենսագործել, վորի պատճառով չի ապահովված պլանների կատարումն իր բոլոր ցուցանիշներով, չկա և խոշոր խեղաթյուրումներ կան կուս. աշխատանքնե[illegible] ըստ արտադրական սկզբունքի վերակառուցման, Մարքս-Լենինյան դաստիարակության գործի կազմակերպման, միանձնյա ղեկավարության կիրառման, տեխնիկայի տիրապետման, բանվորների և աշխատավորների հուզող հարցերին ժամանակին հակազդելու և այլն:

8. Պլենումը գտնում է, վոր վերջին ժամանակս Լենինականի կազմակերպության առանձին ողակներում (Տեքստիլում և Դեպոյում) անբավարարության փաստերը, շաքարի կոմբինատի ապարատում հայտնաբերված բյուրոկրատական վերասերման փաստերը, Հաջինագար, Բաջողլի, Արալըղ, Դահալլի և այլ գյուղերում վերասերման խայտառակ փաստերը հետևանք են ինքնաքննադատության թույլ ծավալման, առանձին կուսակցական ընկերների քաղաքական զգոնության բթացման, կուսակցական քաղաքական մասսայական աշխատանքների թուլության և կազմակերպչական կուսակցական և մասսայական դաստիարակչական աշխատանքների թերագնահատման, կուսակցական կյանքից կտրվելու և այլն:

9. Պլենումը նշում է, վոր արդֆինպլանների կատարման

հիմնական նախապայմաններից մեկը հանդիսացող միանձնյա ղեկավարության խնդրում առանձին ողակների աշխատանքների մեջ դեռ այժմ տեղ են գրավում իրավունքների շփոթության փաստեր այս տեսակետից պլենումն առանձնապես անհրաժեշտ է գտնում ընդգծելու տեքստիլ կոմիտեյի (նախքան լիկվիդացիան) կողմից սխալը միանձնյա ղեկավարության սխեմը խախտելու գործում, որն առաջացրեց վարչարարության և տնտեսական ղեկավարությունը առանձին ողակներում փոխարինելու տենդենցների մեջ

10. Պրոֆկազմակերպությունների աշխատանքների վերակառուցումը դեռ չի ապահովում բանվորների ստեղծագործական խանդավառության լիակատար մոբիլիզացիան, ինչպես և նրանց արտադրական դաստիարակչության տալու գործի արմատական կազմակերպման և այն ավելի բարձր աստիճանի վրա տեղափոխումը (ռացիոնալիզացիայի, գյուտարարության-տեխնիկական կրթության, սոցմրցման, կուլտուր-կենցաղային և այլն) և երբեմն էլ առանձին ստորին ողակներում երևան են գալիս որպես պոչականություն։

11. Վարչական-տնտեսական մարմինների որոշ մասն նույնպես չի ըմբռնել իր ապպարատի վերակառուցման, այն պարզեցման, ճկունացման խնդիրները և առանձին դեպքում էլ միանձնյա ղեկավարները պատասխանատվությունից փախչելու, իրավունքները լրիվ օգտագործելու համար անհրաժեշտ համառություն և կամք ցուցաբերելու փոխարեն, իրենք են տեղիք տալիս միանձնյա ղեկավարության կիրառման դժվարություններին (տեքստիլ և այլն)։

Ի նկատի ունենալով վերոհիշյալը միացյալ պլենումը վորոշում է՝

1. Հավանություն տալ քաղկոմի բյուրոյի կողմից ձեռք առնված այն բոլոր միջոցառումներին, որոնք ուղղված են չեղել կազմակերպչական-կուսակցական մասսայական աշխատանքների մեջ ավելի պարզություն մտցնելու և այն ավելի բարձր աստիճանի վրա դնելու համար (ստուգատես, խորհրդակցությունների հրավիրում, յեռաստիճանի կառուցվածք, կոմմունիստների առաջավոր դերի ստուգումը, ստորին կուս-ողակների կոնֆերանսը, գործուղումներ փորձի տեղափոխման համար Բաքու, Թիֆլիս, Գյանջա և այլն)։ Ծառերին կուս աշխատողների դըրադարան ստեղծել (9 բրոշյուրներից) ակումբներում, կուս կաբինետներում, կարմիր անկյուններում, կուս աշխատողների անկյունների ստեղծումը ստորին կուս աշխատողների թարմ նյութ մատակարարելու և աշխատանքը թեկնածուների շրջանում դնելու, տեխնիկական կուս կոնֆերանսներ և տեսական կոնֆերանսներ կազմակերպելու միջոցներ և այլն։

2. Միանգամայն ճիշտ և ժամանակին համարել տեքստիլ կոմիտեյի լիկվիդացիան և առանձին գործարաններում կուս ղեկավարության ուժեղացման, համարձեռք առած միջոցները ինչպես և Մանարանի, Դեպոյի և Շաքարկոմբինատի կուս կոմիտեների կազմակերպումը։

3. Առաջարկել քաղկոմի բյուրոյին կարճ ժամանակամիջոցում մշակելու մի շարք միջոցառումներ գյուղական կազմակերպության աշխատանքներն էլ ավելի ուժեղացնելու, հատուկ ուշադրություն դարձնելով գյուղ աշխատանքի հենակետների վրա, ինչպես և կազմակերպելու քաղաքի առաջավոր բջիջների աշխատանքների փորձի փոխանակումը քաղաքի բջիջների միջև և հնարավորության սահմաններում այն գյուղ տեղափոխել։

4. Պլենումն առանձնապես բյուրոյի ուշադրությունը է հրավիրում խուլ անկյուններում (медвежие уголки) գտնվող բջիջների աշխատանքների ղեկավարությունն ուժեղացնելու վրա, ինչպես և հիմնարկային բջիջների անբավարար վերակառուցման վրա։

5. Առաջարկել քաղկոմի բյուրոյին, կոմիտեներին և բոլոր բջիջներին ձեռնարկելու լայնածավալ աշխատանքներ քաղկոմի, Հայկենտկոմի, Համկոմկուսի Կենտկոմի վորոշումների և «Բոլշեվիկ»-ի առաջնորդողի հիման վրա մոբիլիզացիայի յենթարկելու վողջ կազմակերպության ուշադրությունը, կազմակերպչական կուսակց-մասսայական դաստիարակչական աշխատանքներ բոլոր ողակներում արմատապես վերակառուցելու և այդ աշխատանքների կենտրոնը ցեխ, բրիգադ, դաշտ, սար տեղափոխելու և անխնա պայքար մղելու կուսակցական և կուսմասսայական աշխատանքները թերագնահատող ոպորտունիստների դեմ, կանգ

չառնելով նրանց կուսակցական աշխատանքից հանելու, կուսակցական տույժի յենթարկելու յեվ մինչեվ անգամ կուսակցությունից հեռացնելու առաջ:

6. *Առաջարկել քաղկոմի բյուրոյին համապատասխան բաժինների միջոցով ամենակարճ ժամանակամիջոցում միջոցառումներ մշակելու ստորին կուս օղակների աշխատանքների մեջ բովանդակություն մտցնելու և բոլոր հարցերում նրանց օգնելու, ինչպես և հաճախակի խորհրդակցություններ հրավիրելու դրական աշխատանքի փորձը փոխանակելու համար:*

7. *Առաջարկել քաղկոմի բյուրոյին միջոցներ ձեռք առնելու և ուժեղացնելու ներկուսակցական աշխատանքները բջիջներում, խմբակներում, առանձին ուշադրություն դարձնելով քաղկոմի կողմից մշակված կուս օրի նախապատրաստման վրա ինչպես և բոլոր կոմունիստներին ընդգրկել կոնկրետ պարտականությունների մեջ, հետեվել և հաշվի առնել այդ պարտականությունների կատարման, բարձրացնել կոմունիստի պատասխանատվությունն իրեն հանձնարարված պարտականությունների կատարման համար, կուսակցության գլխավոր գծի համար մղվելիք պայքարում և այլն: Ապահովել կուսակցական հարցերի լայն քննարկումը, կոմունիստների ժողովներին կանոնավոր կերպով մասնակցել, անդամավճարների կանոնավոր մուծումը, վորոշումներին յենթարկվելը և նրա կատարման համար պայքարելը, կուսակցական կյանքով հետաքրքրվելը, թերթի հետ կապված լինելը և այդպիսով բարձրացնել կուսակցական դիսցիպլինան դարձնելով կազմակերպությունն ավելի մար*տունակ, գաղափարապես միաձույլ յեվ կազմակերպականապես ամուր:

8. *Առաջարկել քաղկոմի բյուրոյին, կոմխմբերին, կուսբյուրոներին և բջիջներին առանձնակի ուշադրություն դարձնելու կուս աճման և կազմակերպության այդ կարգի կարգավորման խնդիրների վրա, այն դարձնելով սիստեմատիկ աշխատանքի բնագավառ և վերջ տալու այդ գործում յեղած կամպանիային, (ռեզերվի հետ աշխատանք կատարելը:)*

*Ակտիվի հաշվառումը, վորոնց հաշվին պետք է հետագայում կատարվի աճումը, ընդունելությունների կատարումն առանց ձգձգումների, աշխատանք կուս թեկնածուների մեջ, կուս թեկնածուների առանձին ժողովների հրավիրումը, նրանց բոլորին կուս պարտականությունների մեջ ընդգրկումը, ստաժն անցած թեկնածուների ժամանակին անդամ փոխադրելը, նրանց արդյունաբերության մեջ առաջատար դերի ստուգումը և ապահովումը և այլն): Այս բոլորը միասին կատարելու դեպքում հնարավոր կլինի կանոնավորել կուս աճումն և նոր ընդունվածներին բոլշեվիկյան դաստիարակումը:*

9. *Առաջարկել քաղկոմի բյուրոյին, կոմխմբերին և բջիջներին ստորին օղակներում այնպես կազմակերպել և դնել կազմկուս-մասսայական աշխատանքները, վոր նապահովվի արտադրական պլանների կատարումը, վորի լավագույն նախապայմանը, ընկ. ՍՏԱԼԻՆԻ 6 պատմական ցուցումունքների լիակատար կատարումն է՝ բանվորի հոսունության վերացումը և կազմակերպված հավաքագրումը, աշխատավարձի «ձախ» հավասարեցման վերացումը և գործարքային սիստեմի կիրառումը, բանվորներից տեխնիկական նոր կադրերի պատրաստում և հին շկոլայի տեխնիկական ինտելիգենցիայի խորհրդային պլատֆորմայի վրա կանգնած մասի նկատմամբ վերաբերմունքի փոխումը, անտնաշվարկի լրական կիրառումը, մատակարարման գործի կազմակերպում, միանձնյա ղեկավարության կիրառումը և այլն:*

10. *Առաջարկել քաղկոմի բյուրոյին մինչև հունիսի 30-ը մշակել կոնկրետ միջոցառումներ, և ավելի պարզություն մտցնել յեռանկյունների աշխատանքների մեջ ու ապահովել հարցի լուծման ժամանակ յուրաքանչյուրի մասնակցությունն իր ծայրից, միաժամանակ խիստ պատասխանատվության կանչել միանձնյա ղեկավարության խախտողներին և պատասխանատվությունից խուսափողներին, այդ առթիվ հրավիրել հատուկ շերտավորված խորհրդակցություններ և լայն պարզաբանել յեռանկյունու փոխհարաբերության հարցերը:*

11. *Առաջարկել քաղկոմի բյուրոյին կոմունիստների արտադրության, ինչպես և քաղաքական ու տեսական կրթության մեջ առաջատար դերն ապահովելու նպատակով շարունակել ներկայումս սկսած ստուգումը, խիստ հետեվելով և զգուշացնելով վողջ կազմակերպությունն այդ ստուգման յերկու վտանգավոր ընթացքից՝*

*ա). ստուգման կամպանիան դառան վերածելու ձգտումից:*

*բ) վոչ գործնական (խալաստոյ) քննադատության և անձնական կյանքի մանրույքները փորփորելուց:*

12. Առաջարկել քաղկոմի բյուրոյին հատուկ ստուգատես կազմակերպելու, Մարքս-Լենինյան ուսուցման գործի դրվածքի վիճակը պարզելու, բոլոր կոմունիստներին գլխովին ընդգրկելու քաղուսուցման ցանցում, կիրառելով Համկոմկուսի Կենտկոմի վորոշումը այդ մասին, բարձրացնելով այդ աշխատանքների վորակը, ավելի սրել կազմակերպության գաղափարական զգոնությունը դեպի հակակոմունիստական բոլոր տեսակի վտանգավորությունները և ընկ. ՍՏԱԼԻՆԻ «Նամակ Կովկասից» նամակի հիման վրա, ավելի ուժեղացնել պայքարը կուսակցության գլխավոր գծի կիրառման համար, կազմակերպել տեսական կոնֆերանսներ կուսակցության շարքերն անցած յերիտասարդ կադրերին բոլշևիկյան կոփվածություն տալու համար և այլն։

13. Կուսակցական ինֆորմացիայի խոշոր կարևորությունը մինչև այժմ բացասվել է, կոմիտեների, կոլբյուրոների և բջիջների կողմից, վորի հետևանքով բանվորական լայն զանգվածներում գոյություն ունեցող տրամադրությունների և հուզող հարցերի մասին ժամանակին չեն տեղեկացրել քաղաքային կոմիտեյին, վորի հետևանքով վոչ բոլոր դեպքերում են միջոցներ մշակել հակադրելու վատ առողջ տրամադրություններին։ Առաջարկել բոլոր կոմիտեներին, կոլբյուրոներին և բջիջներին բացառիկ նշանակություն տալով կուսինֆորմացիային, բջիջների պատրաստված ընկերներին հանձնարարել ինֆորմացիայի պարտականությունները և հետևելու, վոր նրանք պարբերաբար ինֆորմացիաներ ներկայացնեն քաղկոմին և ընդհանրապես կարգավորել այդ ինֆորմացիաների մշակումը։

14. Հաստատել քաղկոմի բյուրոյի վորոշումը կուսակցական ստորին կադրերի հոսունության դեմ առնելու վերաբերյալ և հարց հարուցել Կենտկոմի առաջ բջջային կուս ակտիվի համար Լենինականում յերեկոյան կամ համալսարան կազմակերպելու բացի այդ ակտիվն ավելի վորակավորելու նպատակով հետագայում շարունակել գիտական գործուղումներ ավելի մեծ գործարանների կուս աշխատանքի փորձն ուսումնասիրելու և փոխելու մեր կազմակերպության մեջ։



## ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԲՋԻՋՆԵՐԻ ԿՈՒՍ. ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Հ. Կ. (բ) Կ. Լենքաղկոմի բյուրոյի 1932 թ. Մայիսի 7-ի վորոշումը)

Լսելով զեկուցում արդյունաբերական բջիջների աշխատանքների վերակառուցման դրության մասին բյուրոն արձանագրում է՝

ա) Արդյունաբերության կուս. բջիջները, կուս. աշխատանքների կենտրոնը ցեխ, բրիգադա, կոմպլեկտ տեղափոխելու ուղղությամբ ձեռք են բերել հաջողություններ, սակայն դեռ մինչև այժմ չի ամրացված կուս. ստորին ողակները (կուս. խմբակ, ողակային բջիջ,) և լիովին չի կատարված Համկոմկուսի Կենտկոմի մարտի 21-ի վորոշումները։

բ) Չի ապահովված Կենտկոմի վորոշումը կազմակերպության յեռաստիճան ձևը սահմանելու մասին.(Տեքստիլ)։

գ) Խախտված է կուս. ողակների ըստ արտադրական սկզբունքի կազմակերպելու կարգը (Տեքստիլ, Մեխ. գործարան, Փայտամշակման գործարան), ըստ վորում 2—3 կոմպլեկտներում կազմակերպված է մեկ կուս. խմբակ, կամ մեկ կոմպլեկտում աշխատող ընկերը մեկ ուրիշ կոմպլեկտի կազմակերպիչ է։

դ) Ճիշտ չի դասավորված կուսակցական ուժն ըստ սմենաների և կոմպլեկտների (Տեքստիլ), վորի հետևանքով առաջին սմենայում աշխատող կոմունիստները համարվում են 2-րդ սմենայի բջջի անդամ, կամ թե չէ մեկ սմենայում բոլորովին կոմունիստներ չկան։

յե) Բացակայում է կոմունիստների սոցմրցման յեվ

հարվածայնության մեջ գլխովին ներգրավումը և նրանց աշխատանքների հաշվառում:

գ) Բոլոր կոմունիստները չեն ընդգրկված կուս. պարտականությունների մեջ և թույլ է կուս. դիսցիպլինան, վորոշ բջիջներում:

ե) Սխալ են կազմակերպված սեկտորները և մեծ մասամբ անգործունեության են մատնված յեղել, վորի հետեվանքով չեն ապահովվել բջիջի ոպերատիվ ղեկավարությունը տվյալ ձեռնարկության աշխատանքների վրա:

ը) Դեռ կազմակերպության վորոշ բջիջներ, և առանձին կուս. պատասխանատու ընկերներ պարզ պատկերացում չունեն կազմ. կուսակցական և կուս. մասսայական աշխատանքների մասին, վորի հետեվանքով բջիջի ղեկավար ընկերները չհասկանալով սեկտորների և խմբակների իրավունքներն ու պարտականությունները, խախտել են կուսակցական վորոշումները այդ մասին (սեկտորում ընդունելության հարցի քննում, սեկտորում կազմակերպիչների սխալ դասավորում և այլն):

թ) Կուս. աճման գործը բոլոր բջիջներում սիստեմատիկ և ծրագրված բնույթ չի կրել, վորի պատճառով առանձին բջիջներում աճումը միանգամայն թույլ է յեղել և առանձին ցեխերում աշխատանք չի տարվել ռեզերվ պատրաստելու և այդպիսով չի ապահովել կուս. ուժերի ճիշտ դասավորումն առանձին ցեխերում (Տրիկոտաժ, գործվածքային, Հայտնաբերողի ցանց, Մեխ. գործարան):

ժ) Մարքս-լենինյան դաստիարակության գործի կազմակերպումը դեռևս Տեքստիլում մնում է չլուծված, մեծ աշխատանք է պահանջում կուս. կազմակերպության քաղաքական դաստիարակության գործը, բարձր աստիճանի վրա դնելու համար: Առավելապես վատ դրության մեջ է գտնվում կուս. ընկերների տեխնիկական գիտելիքներ տալու գործի կազմակերպումը, համարյա թե բոլոր ձեռնարկներում:

ի) Չի վերակառուցված Պրոֆ. ԼԿՅԵՄ, հասարակական կազմակերպությունների աշխատանքները, վորի պատճառով և բոլոր ստորին արտադրական ողակներում չի



ապահովված յեռանկյունիների կազմակերպումը:

լ) Միանգամայն անբավարար է յեղել «Հարվածային Տեքստիլշչիկ» թերթի ոժանդակությունը կազմ կուսակցական և կուս. մասսայական աշխատանքների վերակառուցման և այդ ասպարեզում յեղած դրական փորձի կազմակերպման գործում, ինչպես և թույլ է յեղել պատի լրագրերում կուս. աշխատանքների վերակառուցման հարցերի լուսաբանումը:

խ) Բջիջները պարբերաբար չեն հրավիրել խմբակի յեվ կուս. կազմակերպիչների խորհրդակցություններ և այդպիսով չեն ապահովել նրանց վրա կոնկրետ ղեկավարությունը:

ծ) Համախակի և յերբեմն էլ առանց հարգելի պատճառով փոփոխման են յենթարկվել բջիջների քարտուղարները, սեկտորավարները, խմբակային և կուս. կազմակերպիչները, վորպիսի հանգամանքը թույլ չի տվել նրանց մեջ խորացրված աշխատանքներ կատարելու:

կ) Բազկոմի բյուրոն առանձնապես շեշտում է, վոր տեղական արդյունաբերության, հատկապես տեքստիլ արդյունաբերության պլանների կատարման խրոնիկական ճեղքվածքը, բրակի շարունակումը, բանվորի հոսունությունը, աշխատավարձի չվոր դրությունը, «ձախ» հավասարեցման դեպքերը, աշխ. դիսցիպլինայի թուլացումը, ընկ. ՍՏԱԼԻՆԻ ցուցմունքները լրիվին չկիրառումը և վերջապես ոչքակալության փաստերը մանարանում, այս բոլորը կարող էյին տեղի ունենալ կուս. կազմակերպության, կազմ կուսակցական և կուս. մասսայական աշխատանքների թերագնահատման պայմաններում:

ն) Այս բոլոր թերությունների, ինչպես և պլանների մեջ յեղած ճեղքվածքների վերացումն ու 32 թ. պլանների կատարման ապահովումը խոշոր չափով կախված է կազմակերպության կազմ կուսակցական և կուսմասսայական աշխատանքների վերակառուցումից և այդ վերակառուցումը թերագնահատող ոպորտունիստների դեմ պայքարի ուժեղացումից:

Արդյունաբերական ձեռնարկների և հատկապես Տեքստիլի կուսկազմակերպությունը պետք է ուժերի մոբիլիզացիա կատարեն կազմակերպության մարտունակության բարձրացման հիման վրա արմատախիլ անելու արդյունաբերության մեջ աշխատողների շարքերում դեպի պլանների ճեղքվածների վերացումը յեղած հանգստացուցիչ տրամադրությունները յեվ կոնկրետ արտահայտիչներին մինչև անգամ կանգ չառնելով նրանց կուսակցական շարքերից, վտարելու առաջ։

Քաղկոմի բյուրոն վորոշում է՝

1. Առաջարկել կազմհրահանգչական բաժնին, մանարանի կոմիտեյին, գործարանների կոլբյուրոներին և բջիջներին մինչև ապրիլի վերջը վերանայելու կուսաշխատանքների սարուկտուրային վերակառուցումը և ինչպես բջիջները նույնպես և կուսխմբակներն և կուսկազմակերպիչներն կազմակերպելու դասավորելու ըստ արտադրական սկզբունքի (ցեխ, հերթափոխություն, կոմպլեկտ, բրիգադա), խոշոր ուշադրություն դարձնելով կուսխմբակների վրա, այն դարձնելով կուսմասսայական աշխատանքների հիմնական օղակը—բանվորական մասսաների արտադրական և քաղաքական ակտիվության սոցմրցման և հարվածայնության բարձր ձևերի իսկական կազմակերպողը և (տնտհաշվարկային բրիգադներ, հերթա-հանդիպական պլան, տեխ-պլան, կուլտ-կենցաղային և այլն)։

Մասսայականացնել կուսխմբակի խնդիրները բանվորների լայն շրջանում և բարձրացնել նրանց պատասխանատվությունն (կոմպլեկտի, բրիգադի) արդֆինպլանների կատարման համար։

2. Ամենակարճ ժամանակամիջոցում ուսումնասիրել և ստուգել կուսակցական ուժերի դասավորումն ըստ արտադրական առանձին միավորների (ցեխ, հերթափոխություն, կոմպլեկտ, բրիգադ) և կատարել վերադասավորում այն հաշվով, վոր այդ և առանձնապես կարեվորագույն միավորների վրա ապահովվի կուսազդեցությունը և ղեկավարությունը։

Կուս. ուժերի ճիշտ դասավորման, կուս. աճման հիման վրա արտադրության առանձին կարեվորագույն բն-



նագավառներում ուժեղացնել կուսակցական շերտ (նախապատրաստական բաժին, բանկարրոշ և այլն)։

3. Անհրաժեշտ համարել կուսխմբակների նկատմամբ ղեկավարությունն ուժեղացնելու նպատակով բջիջներում, կոլբյուրոներում, կոմիտեյի բյուրոյում լսել առանձին կուսխմբակների և կազմակերպիչների զեկուցումները յեվ յերեվան հանելով թերությունները, տալ ցուցմունքներ հետագա աշխատանքների կազմակերպման համար։ Միաժամանակ առանձին գործարաններում հրավիրել կուսխմբակների և կազմակերպիչների պարբերաբար խորհրդակցություններ և կատարել խմբակների և կուսկազմակերպիչների աշխատանքների դրական փորձի փոխանակում։ Առանձին գործարանների խմբակների և կուսկազմակերպիչների միջև անցկացնել մրցակցային կոնկրետ ղեկավարության կազմակերպման առթիվ։

4. Վողջ կուսկազմակերպության կարեվորագույն խնդիրը համարելով կոմունիստների արտադրության մեջ առաջատար դերի ապահովումն, և այն, վոր մինչև հիմա բոլոր կոմունիստները գլխովին չեն ընդգրկվել սոցմրցման և հարվածայնության մեջ, դեռ կեղծ հարվածայինները տեղ են գրավում կազմակերպության շարքերում, առաջարկել մանարանի կոմիտեյին, գործարանների կոլբյուրոներին և բոլոր բջիջներին մայիս ամսում անցկացնելու պլանները սիստեմատիկաբար թերակատարող կոմպլեկտներում, ցեխերում և բրիգադներում, իսկ հետագայում ամբողջ կազմակերպության մեջ կոմունիստների աշխատանքների ստուգում, կեղծ հարվածայիններին վտարելով կուսակցական շարքերից, վորպես կոմունիստի կոչումն չարդարացնողի. նաև սոցմրցումից և հարվածայնությունից դուրս մնացողներին ամբողջովին ընդգրկել այդ աշխատանքներում ավելի բարձրացնել կոմունիստների պատասխանատվությունն արտադրական առաջադրանքների կատարման, ինչպես և քաղաքական պատրաստականության գործում։

5. Առանձնապես տեքստիլի կազմակերպության կենցաղից պլանների թերակատարումով աշխատելու տրամադրությունները վերացնելու և ընկեր Ս Տ Ա Լ Ի Ն Ի

ցուցմունքներն անշեղորեն կենսագործելու համար ջաղկոմը տեքստիլ կազմակերպության կենտրոնական խնդիրն է համարում առանձին գործարաններում կազմակերպել նախնական հաշվառումը, ապահովել ընդհանրապես բանվորների և մասնավորապես հարվածայինների աշխատանքների արդյունքների հաշվառումը և պարբերաբար կատարել ստուգում թե կոմունիստները և կոմերիտականներն ինչպես են կատարել իրենց վրա վերցրած պարտականությունները:

6. Հոսունությունը համարելով հիմնական չարիքներից մեկը Տեքստիլի համար, վորը խոշոր չափով կապված է աշխատանքի ճիշտ հաշվառման, վարձատրման աշխատանքների կազմակերպումից և կուլտ-կենցաղային պայմանների ստեղծումից, կարևորագույն խնդիրը համարել մայիս ամսում բոլոր գործարաններում անցկացնել նորմաների և վարձատրման կարգի ստուգատեսը վերացնել աշխատավարձի «ձախ» հավասարեցման փաստերը և ճիշտ կազմակերպել աշխատանքի վարձատրումը, լայն կիրառելով գործարքային սիստեմը: Միաժամանակ ինքնամրացման պայմանագրեր կնքել ամառվա ընթացքում բանվորի հոսունությունը վերացնելու համար:

7. Առանձին ուշադրություն դարձնել մեքենաների և նրանց մասերի ու ռեմոնտի դիմազրկության վերացման վրա, բարձրացնելով ստորին կուս. օղակների պատասխանատվությունը մեքենաների սարքավորումը պահպանելու համար:

8. Լայն ծավալել բանվորների և ՃՏՍ-ի աշխատողների մեջ կուլտ-կենցաղային աշխատանքները, քննության առնելով նրանց ժողովներում կուլտ-կենցաղային աշխատանքների պլանները, կազմակերպել առանձին զեկուցումները և այլն:

9. Առաջարկել ագիտմասսբաժնին և բոլոր բջիջներին առանձին ուշադրություն դարձնել բանվորական հանրակացարանների կուլտ դաստիարակչական աշխատանքների դրվածքի վրա և այն դարձնել սիստեմատիկ ու ծրագրային, ապահովելով վորակյալ աշխատողներով:

Կուս բջիջները պետք է ձգտեն, վորպեսզի



2-րդ կվարտալում ամբողջ գործարանները և առանձին ստորին արտադրական օղակները (ցեխ, կոմպլեկտ, բրիգադ) անցնեն իրական տնտհաշվարկի, վերացնելով այդ գործում յեղած բոլոր արգելակները:

10. Ինժեներա-տեխնիկական աշխատակիցների մեջ ուժեղացնել մասսայական աշխատանքները, նպատակ դնելով նրանց ղեկավար դերն արդյունաբերության մեջ բարձրացնել, նրանց մոտեցնել կուսակցությանը և լավագույն, նվիրված, փորձված մասին ընդգրկել կուսշարքերը:

11. Առաջարկել կուլտպրոպ բաժնին և բոլոր բջիջներին մշակել կոնկրետ միջոցառումներ կոմունիստներին և կոմերիտականներին, ինչպես և հարվածայիններին, ռացիոնալիզատորներին, գյուտարարներին և բոլոր բանվորներին ընդգրկելու տեխնիկան տիրապետող խմբակների մեջ, բացել հատուկ դասընթացներ և հրավիրել տեխնիկական կոնֆերանսներ:

12. Ձգտել, վորպեսզի կազմվեն տեխպլաններն առանձին ցեխերի, կոմպլեկտների, բրիգադների համար և բոլոր արտադրական միավորներում աշխատող բանվորներին տեղյակ պահել այդ պլանների կատարման մասին. վերջ դնել գյուտարարության և ռացիոնալիզացման գործում յեղած բյուրոկրատական վերաբերմունքին և քաշքշուկներին:

Առաջարկել կոմբինատի վարչությանը և Տեղարդին վերանայել ռացիոնալիզացման բաժնի աշխատակիցների կազմը, այն ուժեղացնելու նպատակով:

13. Առաջարկել Պրոֆխորհրդին և միացյալ գործարկոմին, կուսկազմակերպության օժանդակությամբ կազմակերպելու ռացիոնալիզացման և գյուտարարության առաջարկների դեկադներ և ընթացք տալ բանվորների արած առաջարկներին:

14. Համ Կ. (բ) ԿԿ 31 թ. մարտի 21-ի վորոշման հիման վրա վերանայել արտադրական խորհրդակցությունները, մանրացնելով այն կազմակերպել առանձին արտադրական միավորներին կից (բրիգադ, կոմպլեկտ), միաժամանակ գործադրել նույնանման մասնագիտության

ունեցող բանվորների խորհրդակցության հրավիրումը (վարպետներ, յենթավարպետներ և այլն)։

15. Ցրել կոլբյուրոներին կից կազմակերպված սեկտորները։

16. Առաջարկել բոլոր բջիջներին վերջ տալու խմբակային և կուսկազմակերպիչների հաճախակի փոփոխմանը ամեն կերպ աշխատել ոգնել խմբակի և կուսկազմակերպիչներին, նրանց ավելի վորակավորելու նպատակով։

17. Առաջարկել կազմհրահանգչական բաժնին յեռանկյունների խորհրդակցությունների միջոցով ճշտելու նրանց իրավունքները և բոլոր ստորին արտադրական ոգակներում ապահովել յեռանկյունիների կազմակերպումը և նրանց կոնկրետ աշխատանքը։

18. Առաջարկել ԼԿՅԵՄ Քաղկոմին ուժեղացնելու արդյունաբերության, հատկապես Տեքստիլի կազմակերպության մեջ աշխատանքները և հետեվելու նրանց պլանների կատարման գործում ունեցած մասնակցությունը։

19. Առաջարկել Պրոֆխորհրդի և միացյալ գործարկոմի կոմֆրակցիաներին ամենակարճ ժամանակամիջոցում ավարտելու պրոֆաշխատանքների վերակառուցումը, կազմակերպելով պրոֆխմբակները և նրանց պատասխանատու դարձնելով արդֆինպլանների կատարման համար։

20. Առաջարկել կուլտպրոպ բաժնին հատուկ ստուգատես անցկացնելու և Մարքս Լենինյան դաստիարակության գործը, ավելի բարձր աստիճանի վրա դնելու հատկապես Տեքստիլում։

21. Առաջարկել բոլոր բջիջներին կուսխմբակներում այնպես բաժանելու կուս. պարտականությունները, վոր բոլոր կոմունիստներն ընդգրկվեն աշխատանքների մեջ, առանձնակի ուշադրություն դարձնելով թեկնածուների մեջ տարվելիք աշխատանքների վրա։

22. Կոմիտեյի, կոլբյուրոների և բջիջների նիստերում լսել առանձին խմբակի և կազմակերպչի զեկուցումները։

23. Կուսխմբակները հատուկ ուշադրություն պիտի դարձնեն կուսաճման գործին, լավագույն հարվածայնին,



նվիրված, առաջավոր բանվորների մեջ նախորոք աշխատանք կատարելու միջոցով խտացնելու կուսակցության շարքերը։

24. Առաջարկել կուլտպրոպ բաժնին վերանայելու գոյություն ունեցող պատի լրագրերի ցանցը և կոմպլեկտային թերթեր կազմակերպելու։

25. Առաջարկել «Բանվոր»-ի խմբագրությանը պարբերաբար լուսաբանել կուսաշխատանքների վերակառուցման հարցերը։

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ—ССРА
им. А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
1008
34388

## ԽՈՐՀ. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, Մ. Տ. Կ., ԿՈԼԽՈԶ ՅԵՎ ԳՅՈՒՂ ԿՈՄԲՋԻՋՆԵՐԻ ԿՈՒՍ. ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Հ.Կ.(բ.)Կ. Լենքաղկոմի բյուրոյի 1932 թ. ապրիլի 6-ի վորոշումը)

*Քաղկոմի բյուրոն լսելով զեկուցում Համկոմկուսի Կենտկոմի վորոշումը գյուղ բջիջների կուս կազմակերպչական մասսայական աշխատանքների վերակառուցման և խորհտնտեսության, ՄՏԿ և խոշորագույն կոլխոզների բջիջները գյուղի կուսակցական աշխատանքների հենակետները դարձնելու վերաբերյալ կատարելու մասին գտնում է, վոր՝*

*ա) Այդ վորոշումը դեռ ևս լրիվ չի իրականացվել և չնայած այդ գործում ձեռք բերած հաջողություններին, այնուամենայնիվ Խորհ. տնտես., Մ. Տ. Կ., գյուղական բոլոր բջիջները չեն կարողացել Քաղկոմի ցուցմունքներով ամբողջովին վերակառուցել իրենց աշխատանքները։*

*բ) Սովխոզի կոլբյուրոն չի գլխավորել կուս կազմակերպչական մասսայական աշխատանքները, վորի հետևանքով բջիջները չեն վերակառուցել իրենց աշխատանքները, չեն ստեղծել ամուր, իսկական կուսակցական ոջախ (խմբակ,) չեն պահպանել ըստ արտադրական սկզբունքների վերակառուցումը և այդպիսով չեն տվել գյուղական աշխատանքների որինակելի փորձ։ Սովխոզի կազմակերպությունը չի կարողացել ապահովել իր շարքերի մարտունակությունը, չի բարձրացրել նրա քաղաքական գրագիտությունը և չի գլխավորել պայքարն ընդդեմ անտնտեսավարության, բուրժուական վերասերման տենդենցների և այլն։*

*գ) Միանգամայն անբավարար է կուսակցական ուժերի ճիշտ դասավորումը բրիգադների մեջ, ինչպես սովխոզում, նույնպես և մեծ մասամբ կոլխոզներում, իսկ առանձին բջիջներում միանգամայն խախտված է կուսակցության վորոշումը, կուսակցական ընկերներին արտադրության մեջ ունենալիք առաջավոր դերի մասին (ինչպես որինակ Մեծ Պարնի, վորտեղ 35 կոմմունիստներից ու աշխատանքի մեջ են միայն 3-ը իսկ մնացածները վարչա-տնտեսական աշխատանք են կատարում)։*

*դ) Մի շարք գյուղական բջիջներում տեղ գտած խայտառակությունները և անգամ յերբեմն էլ հակահեղափոխական տարրերը (Հաջինազար, Բաջողլի, Արալղ, Դահարլի, Ծիրխան, Իլխիբըլի) հետևանք են այդ բջիջների կողմից կուս կազմակերպչական և մասսայական աշխատանքների վերակառուցումն ապորտունիստական ինքնահոսի թողնելուն։*

*Քաղկոմի բյուրոն արձանագրում է, վոր գյուղական բջիջների աշխատանքների թույլ վերակառուցումը նշանակալից չափով հետևանք է կուս կազմակերպչական և կուսակցական մասսայական աշխատանքների խոշոր նշանակության թերագնահատման, վորպիսի տրամադրություններից ազատ չեն մի շարք պատասխանատու ղեկավար ընկերներ։*

*Քաղկոմի բյուրոն նշում է, վոր հենակետներ ստեղծելու գործում թույլ է տված սխալ, վորն արտահայտվել է բջիջների ըստ աշխարհագրական դիրքի ընտրելու մեջ։ Բյուրոն միաժամանակ գտնում է, վոր կազմակերպության մեջ կան բջիջներ, ինչպես Բոյանդուրը, Ջաջուռը, վորոնք կարող են վերածվել հենակետների, շնորհիվ այդ բջիջների կազմ-կուսակցական և մասսայական աշխատանքների ճիշտ կազմակերպման և դրա հետևանքով իրենց վրա դրած պարտականությունների և գյուղ պլանների կատարման։ Բյուրոն գտնում է, վոր գյուղ աշխատանքի հենակետներ ստեղծելու գործում պետք է ղեկավարվել Կենտկոմի այն ցուցմունքներով վորն ասում է* «Սովխոզների, ՄՏԿ-ների յեվ խոշորագույն կոլխոզների բջիջների դերը, վորոնք հանդիսանում են գյուղական կուս աշխատանքների հենակետները, գյուղական ցաք ու ցրիվ բջիջների նկատմամբ ըստ եյության պետք է լինի հրահանգչական, ըստ վորում հատուկ կուս կետերի կազմակերպումը պարտադիր չէ»։

Քաղկոմի բյուրոն լսելով սովխոզի, ՄՏԿ-ի, կոլխոզների և գյուղական կոմբջիջների աշխատանքների դրությունից. այդ բջիջների հետագա անելիքներն է համարում՝

## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՅԵՎ ՄԵՐՁՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՋԻՋՆԵՐԻՆ

Խորհրդային Տնտեսության և մերձ քաղաքային տնտեսությունների կուս կազմակերպությունների խնդիրն է համարվում կուս աշխատանքների վերակառուցման միջոցով ապահովել՝

1. Աշխատանքի դիսցիպլինայի բարձրացում:

2. Ադմինիստրատիվ, տեխնիկական ղեկավարության ուժեղացումը ստորին օղակներում:

3. Աշխատանքի արտադրողականության բարձրացում:

4. Կուս. կոմյերիտական ուժերի ճիշտ դասավորումը բրիգադներում և աշխատանքի կենտրոնը դաշտ, բրիգադա, գոմ, գարաժ տեղափոխում:

5. Անասնապահական ֆերմայի աշխատանքների մեջ յեղած թերությունների վերացում և անասնապահության զարգացման հարցի լուծման համար կոնկրետ միջոցառումների ձեռնարկումը:

6. Ընկ. ՍՏԱԼԻՆԻ 6 պայմանների լիակատար կիրառումը:

7. Շրջապատող գյուղերին կուս աշխատանքների վերակառուցման փորձով օգնելը:

8. Ապահովել սերմանման պլանների կատարումը:

9. Մեքենաների լիակատար և խնամքով օգտագործումը:

## ՄԵՔԵՆԱՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ԲՋԻՋԻ ԽՆԴԻՐՆ Է՝

1. Բոլոր տրակտորների վրա ապահովել կուս ղեկավարությունը:

2. Կուս աշխատանքների կենտրոնը տեղափոխել առանձին ագրո-շրջաններ (Ուչաստկա):

3. Հողի գիտական մշակման օրինակ տալ շրջապատող կոլխոզներին, գյուղերին և ամեն կերպ օգնել նրանց, անցնելու նոր կատարելագործված մեքենայական գյուղատնտեսության:



4. Ապահովել տեղերում յեղած բոլոր գյուղատնտեսական մեքենաների լրիվ օգտագործումը:

5. Աջակցել կոլխոզների կազմակերպչորեն, տնտեսապես և քաղաքականապես ամրացմանը:

6. Կիրառել ընկ. ՍՏԱԼԻՆԻ 6 պայմանները:

## ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ԲՋԻՋՆԵՐԻՆ

1. Ճիշտ դասավորել կուս և ԼԿՅԵՄ ուժերը կոլխոզային բրիգադներում:

2. Հասնել և ապահովել կուսակցական ընկերների արտադրության մեջ ունենալիք առաջավոր դերը և ակտիվ մասնակցությունը կոլխոզի սև աշխատանքներում,

3. Անշեղ կիրառել Համկոմկուսի Կենտկոմի փետրվարի 5-ի վորոշումը կոլխոզներում առանձին հողամասով, ինվենտարով և աշխատող ուժերով բրիգադներ կազմակերպելու մասին

4. Կուս աշխատանքների կենտրոնը տեղափոխել բրիգադա, դաշտ, գոմ, լայլա և այլն:

5. Կոլխոզների ներքին աշխատանքների կազմակերպման հարուստ փորձով օգնել հետամնաց կոլխոզներին:

6. Ընկ. ՍՏԱԼԻՆԻ 6 ցուցմունքների կիրառմամբ ապահովել և առաջին օրինակը տալ գյուղատնտեսական պլանների կատարման:

7. Բոլոր կուս և կոմյերիտական ընկերների մեջ ուժեղացնել Մարքս-Լենինյան դաստիարակության գործը:

## ԳՅՈՒՂ ԲՋԻՋՆԵՐԻՆ

1. Կուս. կոմյերիտական ուժերի ճիշտ դասավորմամբ ապահովել կուս մասսայական աշխատանքները, թե կոլխոզներում և թե գյուղում:

2. Կազմ-կուսակցական և մասսայական աշխատանքների կենտրոնը համարել կոլխոզը և կազմակերպչորեն, տնտեսապես ու քաղաքականապես ամրացնել կոլխոզները և դրա հիման վրա կոլխոզների աճման նոր վերելք ստեղծել:

3. Հատուկ ուշադրություն դարձնել միանձնատնտեսների մեջ ագրոմինիմումը կիրառելու նրանց մինչև կոլխոզներ մտնելը կոլխոզ դաստիարակություն տալու վրա:

4. Ուժեղ կապ ստեղծել կոլխոզների և նրանցից

դուրս գտնվող աշխատավոր ձեռնարկությունների մեջ, ապահովելով նրանց օգնությունը կոլխոզների ամրացման գործում։

5. Ապահովել Համկոմկուսի Կենտկոմի փետրվարի 4-ի վորոշումների կիրառումը կոլխոզային բրիգադներ կազմակերպելու մասին։

6. Կիրառել ընկ. ՍՏԱԼԻՆԻ 6 պայմանները։

7. Լայն տարածել ագրոնոմիական գիտելիքները և սոցիալիստական գյուղատնտեսության նորագույն նվաճումները։

8. Անխնա պայքար մղել կոլխոզ շարժման գործում յերևան յեկող օպորտունիստական թեքումների և նրանց կոնկրետ արտահայտիչների դեմ։

9. Հատուկ աշխատանք ծավալել գյուղի չքավորության մեջ և աշխուժացնել չքավորական խմբակների աշխատանքները։

10. Ապահովել սերմկամպանիայի պլանների կատարումը կոլխոզներում և մենատնտեսականների շրջանում։

11. Բոլոր բրիգադներում կազմակերպել կուս խմբակներ (յեթե 3-ից վոչ պակաս կոմունիստներ կան, վորտեղ պակաս ե կուս կազմակերպիչներ) օղակներում, բուքերի և տրակտորների վրա ունենալ կուս կազմակերպիչներ, կուս կազմակերպիչները մտնում են խմբակի մեջ, իսկ խմբակ չլինելու դեպքում անմիջականորեն կապվում են բջջի բյուրոյի հետ։

Կազմհրահանգչական բաժնին մեկ ամսվա ընթացքում ստուգել գյուղ բջիջների վերակառուցման աշխատանքները. արմատապես վերակառուցել սովխոզի, ՄՏԿ-ի, կոլխոզների և գյուղ բջիջների աշխատանքները, առանձնել հենակետային բջիջներ առաջին հերթին սովխոզի և ՄՏԿ-ի բջիջները և կոլխոզի ու գյուղական բջիջներից նրանց, վորոնք իրենց աշխատանքներով յեղել են առաջավոր և կարողացել են իրենց հետ տանել շրջապատող կոլխոզ և գյուղ բջիջները։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Գյուղկուս աշխատանքների համար հենակետները, Սովխոզի, ՄՏԿ-ի բջիջների հիմունքներով չեն կարող լինել գյուղական վայրերում գտնվող արդյունաբերական ձեռնարկների կուս բջիջները (Կրի գործարան, Կոոպ, Լենդես, կայարանների բջիջներ և այլն)։



Գտնել անհրաժեշտ Սովխոզում կազմակերպել կուսակցական կոմիտե, սակայն վոչ մի դեպքում թույլ չտալով, վոր այդ կոմիտեն իրեն շրջապատող կոլխոզ և գյուղ բջիջների նկատմամբ վերածվի (յենթաշրջանային կոմիտեյի) և այդպիսով մի կողմից փոխարինի քաղկոմին, մյուս կողմից դիմազրկության յենթարկի կոլխոզ և գյուղ բջիջները։

3. Բոլոր հենակետային բջիջների իրավունքները համարել քաղկոմի հանձնարարությունները, 5—7 կիլոմետր հեռավորության վրա գտնվող կոլխոզ և գյուղ բջիջները տեղափոխել և արդյունքների մասին տեղյակ պահել քաղկոմին (մոտավորապես այնպես, ինչպես կատարում ե քաղկոմի հրահանգիչը՝ Հ. Կ. Կ. (բ) Կ. Կենտկոմի 3|12 1932 թվի վորոշումից)։

4. Առաջարկել կազմ բաժնին վերանայելու հենակետային բջիջների քարտուղարների կազմը և ապահովել այն ավելի ձեռնհաս ընկերներով, չստեղծելով հենակետներում հատուկ հաստիքներ։

5. Կուս աշխատանքների վերակառուցման հիմնական խնդիրներից մեկը համարելով կուսակցական ուժերի ճիշտ դասավորումն, առաջարկել, Սովխոզի, ՄՏԿ-ի, Մերձքաղաքային տնտեսության և գյուղ բջիջներին մինչև ապրիլի վերջը վերանայել և վերջնականապես դասավորել կուսակցական ուժերն ըստ արտադրական սկզբունքի, ստորին արտադրական միավորների (արտադրական բրիգադներ, օղակներ և այլն), ապահովել կուսակցական ղեկավարությունը, ստեղծելով ամուր մշտական գործող կուսօղակներ։

Ուժեղացնել կուս ազդեցությունը գյուղատնտեսության, արտադրության մեջ աշխատող բանվորների, բատրակների յեվ կոլտնտեսականների վրա և նրանցից լավագույն, կայուն, փորձված, նվիրված յեվ հարվածային աշխատողներին ընդգրկել կուսակցության շարքերը։

6. Գյուղատնտեսական ասպարեզում աշխատող կոմունիստների առաջավոր դերն արտադրության մեջ ապահովելու համար, առաջարկել ագիտմաս և կուլտպրոպ բաժիններին և բոլոր կուսբջիջներին ձեռք առնելու բոլոր միջոցները կոմու-

նիստներին գլխովին ընդգրկելու սոցմրցման ու հարվածայնության և ագրո-զոո-տեխնիկական կրթության ցանցի մեջ, հաշվի առնել հարվածայնության արդյունքները, հայտնաբերել կեղծ հարվածայիններին և խրախուսելու իսկական հարվածայիններին, ինչպես և վճռական պայքար մղելու կոմունիստի կոլխոզի պասսիվ անդամ լինելու դեմ:

7. Առաջարկել քաղկոմի բաժիններին վերանայելու հրահանգիչների և պրոպագանդիստների կազմը և աշխատակիցների ֆունկցիաների միջև ավելի պարզություն մտցնելու հետևանքով, ավելի ուժեղացնել ստորին կուսօղակների օգնությունը և հրահանգչական ղեկավարությունը:

Այդ նպատակի համար քաղկոմին կից կազմել հրահանգչական խմբեր նրանց մեջ ընդգրկելով խորհրդային, կոոպերատիվ և այլ որգանների հրահանգիչներին:

8. Առաջարկել բոլոր բջիջներին, քաղկոմին կից գյուղական կուս ակտիվի դասընթացներն անցած ընկերներին օգտագործելու կուս աշխատանքների ասպարեզում:

9. Առաջարկել քաղկոմի բաժիններին ուսումնասիրելու գյուղատնտեսական ասպարեզում աշխատող կադրերը և միջոցներ ձեռք առնելու նրանց վորակավորելու և սիստեմատիկ ցուցմունքներ տալու:

10. Առաջարկել գյուղ բջիջներին, բջիջի քարտուղարների հաճախակի փոփոխմանը վերջ տալու և աշխատել տեղում յեղած կուսակցական կադրերը ճիշտ օգտագործելու միջոցով վորակավորել նրանց և նոր կադրեր պատրաստել:

11. Նկատի ունենալով գյուղում աշխատող կոմմունիստների փոքրաթիվ լինելը նրանց մի մասի մեջ նկատվող գյուղից փախչելու տրամադրությունները, առաջարկել բոլոր բջիջներին ուժեղ պայքար ծավալելու նրանց դեմ և կուսակցական դիսցիպլինան խախտողների նկատմամբ խիստ միջոցներ ձեռք առնելու:

12. Առաջարկել կուլտպրոպ բաժնին ձեռք առնելու միջոցներ համապատասխան կենտրոնական որգանների միջոցով գյուղ ակտիվին անհրաժեշտ գրականություն մա-



2336

տակարարելու խնդիրները լուծելու. ինչպես և այդ ակտիվի համար հատուկ դասախոսություններ կազմակերպելու:

13. Նկատի ունենալով, վոր Համկոմկուսի Կենտկոմի դիրեկտիվը գյուղի բոլոր կուսակցականներին կրթության ցանցում ընդգրկելու մասին չի կատարված, առաջարկել կուլտպրոպ բաժնին անմիջապես միջոցներ ձեռք առնելու գյուղ կոմմունիստներին գլխովին ընդգրկելու կուսուսցման ցանցում:

14. Կուսակցական մասսայական աշխատանքները ղեկավարելու և դրական փորձն ամփոփելու հետևանքով, գտնել անհրաժեշտ «Բանվոր» թերթում կուսակցական բաժին կազմակերպելը: Առաջարկել «Բանվոր»-ի խմբագրությանը սիստեմատիկաբար լուսաբանելու կազմ.-կուսակցական և կուս-մասսայական աշխատանքները:

15. Առաջարկել ԼԿՅԵՄ քաղկոմին կազմ. կուսակցական աշխատանքների վերակառուցման համապատասխան ապրիլ ամսում վերջացնելու գյուղ ԼԿՅԵՄ բջիջների աշխատանքների վերակառուցումը:

16. Առաջարկել խորհրդային, կոոպերատիվ և այլ գյուղական հիմնարկներին վերակառուցելու իրենց աշխատանքները:

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0184495